ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019թ. մայիսի 17-ից 19-ը Լոս-Անջելես (Ամերիկայի Միացյալ Նահանգներ)՝ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Իրինա Ղափլանյանի գործուղման վերաբերյալ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Իրինա Ղափլանյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   Բնապահպանության նախարարի առաջին տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

   Լոս-Անջելես (Ամերիկայի Միացյալ Նահանգներ)

   2019թ. մայիսի 17-ից 19-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Հարավային Կալիֆոռնիայի համալսարան

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   Մասնակցություն «Նորարարական Հայաստան» խորագրով հանրային միջոցառմանը

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ**

«Նորարարական Հայաստան» խորագրով միջոցառումը նվիրված էր գիտնականներին և քաղաքականություն մշակողներին, ում գործունեությունն անմիջականորեն անդրադառնում է մարդկային կյանքի վրա և փոփոխում մտածելակերպը՝ միավորելով Հայաստանի, Լոս Անջելեսի և ամբողջ աշխարհի լավագույն քաղաքականությունը, մշակույթն ու երաժշտությունը: Ունենալով մոտ 4000 մասնակից՝ ծրագիրը դարձել է այդ տեսակի ամենախոշոր իրադարձությունը Հարավային Կալիֆոռնիայի հայկական համայնքում:

Այս տարվա ծրագիրը կրում էր «Հին արմատներից դեպի նոր արմատներ» վերնագիրը:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին էներգիայի, այդ թվում էներգիայի արդյունավետության, շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության, քաղաքականության և քաղաքականության իրականացման հետ կապված հարցեր:

Միջոցառման շրջանակներում գիտնականները, քաղաքականության փորձագետները և կառավարության ներկայացուցիչները անդրադարձան վերոնշյալ բնագավառներին առնչվող նպատակներին, ռազմավարություններին և մարտահրավերներին: Վերոնշյալ հանդիպումը հնարավորություն ընձեռեց

յուրաքաչյուր մասնակցին ներկայացնելու իր երկրում իրականացվող միջոցառումներն՝ ուղղված բնապահպանության ոլորտի բարելավմանը:

Միջոցառման ընթացքում իմ ելույթն ուղղված էր շրջակա միջավայրի պահպանության հետևյալ 4 ասպեկտներին.

- մարտահրավերները,
- քաղաքականության հիմնական ուղղությունները,
- մարտահրավերների հասցեագրման մեր տեսլականը,
- սփյուռքի ներգրավվածությունը:

Մասնավորապես նշվեց, որ մենք դեռևս շրջակա միջավայրի պահպանության ոլորտում առկա խնդիրների հստակ ախտորոշման փուլում ենք: Որպես հիմնական մարտահրավերներ անդրադարձա բնական ռեսուրսների կայուն և բանական կառավարմանը, անօրինական ծառահատման, անկայուն ջրային կառավարմանը, մոնիտորինգի համակարգին և այլն: Իմ կողմից կարևորվեց նաև պլաստիկի դեմ պայքարը, մասնավորապես նշելով, որ Հայաստանը դեպի ծով ելք չունեցող երկիր է, և ունենալով պլաստիկով աղտոտված հողեր և ջրային պաշարներ՝ մենք այդ կարևորագույն հարցի ուղղությամբ մշակում ենք համապատասխան օրենսդրություն:

Որպես կարևոր հիմնախնդիր անդրադարձա նաև կլիմայի փոփոխությանը՝ նշելով, որ Հայաստանը 4-րդ ամենախոցելի երկիրն է տարածաշրջանում:

Որպես հիմնախնդիրների հասցեագրման եղանակ նշեցի քաղաքական նպատակների և տեսլականի սահմանման անհրաժեշտությունը՝ ներառելով նոր հայեցակարգեր, ոչ թե փոխհատուցման, այլ մեղմման համար: Անդրադարձա նաև էներգետիկ անկախության ուղղությամբ մեր նախատեսած գործողություններին:

(Վերոնշյալ թեմաների շուրջ ներկայացված ելույթը տեղադրված է հետևյալ էլեկտրոնային էջում՝

https://www.facebook.com/uscarmenian/videos/vb.1490655784521361/371085677124667/?type=2&theater):

7. <u>ԵՐԿԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ</u>

Վերոնշյալ միջոցառման շրջանակներում երկկողմ հանդիպում եմ ունեցել Հարավային Կալիֆոռնիայի Համալսարանի հայագիտության խմբի հետ: Նրանք նշեցին, որ կողջունեն Նախարարության կողմից ներկայացված մասնագետներին, քանի որ կայունության ոլորտում ունեն գիտնականների և փորձնակների մասնագիտացած աշխատանքային խումբ:

Հանդիպում եմ ունեցել նաև Լոս-Անջելեսում Կալիֆոռնիայի Համալսարանի ներկայացուցիչների հետ: Հանդիպամ ընթացքում նրանք նշեցին, որ ունեն Կայունության ոլորտի 24 շաբաթյա ծրագիր և ցանկություն հայտնեցին աշխատել Բնապահպանության նախարարության հետ, ինչպես նաև քննարկել Ծրագրի հասանելիության հնարավորության հարցը նախարարության աշխատակիցների համար:

Երկկողմ հանդիպում եմ ունեցել նաև «Zero Impact Solutions» կազմակերպության տնօրեն պարոն Ավո Բաբիանի հետ: Հանդիպման ընթաքում պարոն Բաբիանն ասաց, որ աշխատում են մի վավերագրական ֆիլմի վրա, որը պատմում է, թե ինչպես Հոլուվուդի մի շարք կառույցները կարելի է դարձնել զրոյական ազդեցության և լիովին կայուն՝ ներառելով Հոլիվուդի որոշ հայտնի և խորհրդանշական կինոթատրոններ: Երբ նրանց ներկայացրեցի, որ Հայաստանի կառավարությունը նախատեսում է միանալ Էլեկտրական շարժիչով մեքենաներին, նրանք ցանկություն հայտնեցի վերջինիս վերաբերյալ ևս ֆիլմ նկարահանել: Ներկայումս մենք աշխատում ենք այս նախագծի շուջ, ինչպես նաև նրանք հետաքրքված են երկրում Էլեկտրական շարժիչով մեքենաների համար լիցքավորման կայանների ստեղծման հարցում:

Հանդիպում եմ ունեցել նաև միկրո էլեկտրական շարժունակության ոլորտում մասնագիտացած «Have a go» կազմակերպության հիմադիր տնօրեն պարոն Թոփջիանի հետ: Նրանք ցանկություն հայտնեցին իրականացնել տեխնիկատնտեսական ուսումնասիրություն Հայաստանում՝ ներկայացնելու միկրո էլեկտրական շարժունակության ոլորտը, ինչպես նաև ածխաթթու գազի (CO_2) կրճատումը՝ որպես վերջինիս արդյունք:

Հանդիպում եմ ունեցել նաև մի շարք ծրագրային ապահովման ընկերությունների սեփականատեր Ալ Իսայանի հետ: Նա նախկինում հանդիպում է ունեցել նաև բնապահպանության նախարարի հետ Երևանում, որի ընթացքում քննարկել են հնարավոր աջակցությունը՝ Հայաստանի համար ծրագրային ապահովման մշակման քարտեզագրման, ինչպես նաև անտառների համար տվյալների բազայի ստեղծման հարցում: Նա նշեց, որ այդ ծրագրի շրջանակներում առաջընթաց կա և այն կներկայացվի բնապահպանության նախարարին Երևան այցի ընթացքում:

8. <u>ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</u>

«Նորարարական Հայաստան» խորագրով հանրային միջոցառման նպատակն էր յուրաքանչյուր մասնակից երկրի ներկայացուցիչներին հնարավորություն ընձեռել ներկայացնելու իր երկրում առկա շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող խնդիրները, ինչպես նաև նախատեսվող քայլերն ու միջոցառումները այդ խնդիրների լուծման համար:

Քննարկումներն արդյունավետ իրականացնելու և համագործակցությունը զարգացնելու համար հանդիպմանը մասնակցում էին տարբեր բնագավառների ներկայացուցիչներ՝ կառավարության ներկայացուցիչներ, քաղաքականություն մշակողներ, գիտական համայնքային հաստատություններ:

Հանդիպումը հարթակ հանդիսացավ շրջակա միջավայի պահպանությանն ուղղված քայլերի, խնդիրների բարձրաձայնմանը: Ներկայացվեցին առաջացող խնդիրների վերաբերյալ խելամիտ և արդյունավետ լուծումներն ու գաղափարները:

Յուրաքանչյուր երկրի համար շատ կարևոր է նախ կանխորոշել տվյալ բնագավառին առնչվող խնդիրը, այնուհետև գտնել համապատասխան լուծումներ:

Հանդիպման ընթացքում խոսվեց Կլիմայի փոփոխության մեղմացման ուղղությունների մասին, մասնավորապես՝ էլեկտրոնային շարժունակությունը (e-mobility), մաքուր տեխնոլոգիական նորարարությունները և էներգաարդյունավետության ընդունման արագացումը: Հարկ է նշել, որ Հայաստանն իրականացնում է մի շարք ծրագրեր ուղղված մաքուր տեխնոլոգիաների և էլեկտրական շարժունակությանը: ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հետ իրականացվում են «Կարողությունների գնահատման» ծրագրեր, որոնք ուղղված են անցմանը դեպի «Էլեկտրական շարժիչով մեքենաներին»:

Ուստի օրգանական և մաքուր երկիր ունենալու համար անհրաժեշտ է փորձի և գիտելիքների փոխանակում յուրաքանչյուր ոլորտում: Մեր նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է աջակցություն և համագործակցություն, որպեսզի շարժվենք դեպի կանաչ և կայուն Հայաստան:

Բնապահպանության նախարարի առաջին տեղակալ

X _____

Իրինա Ղափլանյան